ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1782 - Ա **31 մարտի 2009թ.**

ՆՈՐՔԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 25 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՓԱՆՈՍՅԱՆԻ, ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏԻ ՓԱՆՈՍՅԱՆԻ, ԳԱՅԱՆԵ ՇՄԱՎՈՆԻ ՓԱՆՈՍՅԱՆԻ, ՀԱՍՄԻԿ ՍԱՄՎԵԼԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Կարապետ Համբարձումի Փանոսյանի (ծնված 20.06.1927թ.), Աշոտ Կարապետի Փանոսյանի (ծնված 24.05.1951թ.), Գայանե Շմավոնի Փանոսյանի (ծնված 22.01.1972թ.), Հասմիկ Սամվելի Հակոբյանի (ծնված 19.06.1933թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորքի 13-րդ փողոցի հ.25 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 817.22քմ, որից 577քմ մակերեսով հողամասը Կարապետ Համբարձումի Փանոսյանի, Աշոտ Կարապետի Փանոսյանի, Գայանե Շմավոնի Փանոսյանի, Հասմիկ Սամվելի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 240.22քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1991 թվականը, 21.02.2006թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման 06.02.2009թ. հ.905ա, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 20.03.2009թ. հ. 20/2-Ե-143 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 13.03.2009թ. հ. 20-Ել-1710 եզրակացությունը, համաձայն որի Նորքի 13-րդ փողոցի հ. 25 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ. 2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նորքի 13-րդ փողոցի հ.25 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Կարապետ Համբարձումի Փանոսյանի, Աշոտ Կարապետի Փանոսյանի, Գայանե Շմավոնի Փանոսյանի, Հասմիկ Սամվելի Հակոբյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 577քմ մակերեսով հողամասին կից 240.22քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության

իրավունքը 240.22քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Նորքի 13-րդ փողոցի հ. 25 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Նորքի 13-րդ փողոցի հ. 25 տուն»։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Կարապետ Համբարձումի Փանոսյանի, Աշոտ Կարապետի Փանոսյանի, Գայանե Շմավոնի Փանոսյանի, Հասմիկ Սամվելի Հակոբյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Նորք-Մարաշ թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**